

ԽՈՍՎԿՑՈՒԹԻՒՆ

(զբոյց)

Ն. ՆԱԴԵԺԴԻՆԻ

Խօսքը արծաթ է, իսկ լուռթիւնը՝ ոսկի. ասում է հին ժողովրդական առածը, մատնացոյց անելով խօսակցութիւնն մարդկային կեանքի մէջ ունեցած նշանակութեան վրայ, — գնահատելով նրան ներկայ հանգամանքում, պէտք է ասել միամիայն այն կողմից, որ ընդունուած է ասել՝ «իմ լեղուն—իմ թշնամին է»: Նթէ երբեմն դատարկախօսութիւնը անցանկալի հետևանքների է հասցնում, այնուամենայնիւ՝ մարդկանց խօսակցութիւնը, առհասարակ, հասարակական կեանքի մէջ ամենամեծ «ֆակտատրաներից մէկն է կազմում:

Մի կողմ՝ դնելով բազմատեսակ, մինչև անդամ, զործ նական նշանակութիւն ունեցող խօսակցութիւնները, — ինչպէս դատարկան, քաղաքական, վաճառականական և զիտական, անմիջապէս և խսկական օգուտ ի նկատի ունեցողները, — մոքերի փոխանակութիւն ունեցող հասարակ խօսակցութիւնը, դատարկախօսութիւնը, հանագները և այլն, — պարունակում են իրենց մէջ սացիալական բարձր նշանակութիւն:

«Երբէք, բացի մենամարտութիւնից, — ասում է ֆրանսիացի հոգեբան Թարդ իր նոր հետաքրքիր «Անձնականութիւննեւ ամբողիս» աշխատութեան մէջ, — մենք մարդու վրայ չենք նայում այնպիսի ուշադրութիւնով, ինչպէս սովորաբար խօսակցութեան ժամանակ: Այդ մշտական, ամենակարենոր, բայց և սակաւ նկատուող երեսոյթ է խօսակցութեան միջոցին, նա ցոյց է տալիս ինքնաբերական ուշադրութեան ամենաբարձր աստիճանը, որ արտայայտում են մարդիկ միմեանց, որով նըրանք անգիտակցարար և փոխադարձարար մտնում են աւելի աերա յարաբերութեան մէջ, բան ուրիշ գանազան սոցիալական

դէպքերում»։ Այդախսի դէպքերում խօսակցութիւնը զգացմունքների, մտքերի և գործունչութեան եղանակի ամենառուժեղ գործոնն է կազմում Խօսակցութեամբ մարդիկ փոխադարձաբարձրմեանց վրայ ներգործում են մտերմութեան, ճառապարտայալառութեան յատկութիւններով, հայեացքներով, միմիկայով և այլն։

Խօսակցութեան պատմութեան և էութեան ուսումնասիրութիւնով զրադուելով, Թարդը հարցաքննութեան է ենթարկում, ի միջի այլոց, հոգերանութեան վերաբերուղ խնդիրներ, կամ ինչպէս ինքն է ասում, խօսակցութեան «աօցիօլօգիա»։ Ի՞նչպիսի տարրեր եղանակներ է ներկայացնում խօսակցութիւնը, ինչ երևոյթների միջով է անցել նա, ինչ է նրա պատճառները, շարունակութիւնը և այլն։

«Խօսակցութիւնը, —ասում է «Անձնականութիւն և ամբոխ» գրուածքի մէջ, —մեծ կախումն ունի խօսողների անհատական յատկութիւններից, նրանց կրթութեան աստիճանից, հասարակական դիրքից, նրանց քաղաքի կամ գիւղի բնակիչ միներուց, պարապմոնքների սովորութիւնից և նրանց կրօնական կարծիքներից։ Նրանք տարրերում են իրենց բովանդակութիւնով կամ առարկայով, կերպով, շարժուածքներով, տևողականութիւնով, գրգռման աստիճանով և այլն։ Այսաեղ ֆրանսիացի հոգերանը մէջ է բերում իր հետաքրքիր նկատողութիւնը, թէ աստիճանաբար դիմելով յառաջադիմութեան, մարդիկ սկսում են աւելի շտապ խօսել։

Բոլորովին ուրիշ է իր կերպով և արագութեամբ խօսակցութիւնը, երբ նա տեղի է ունենում բարձրաստիճան ու հասարակ, կամ հաւասար, կամ օտարեների և ազգականների, մարդ ու կնոջ, կամ մէկ սեռի մարդկանց մէջ։ Դաւառական քաղաքացիների խօսակցութիւնը, որոնք միմեանց հետ կապուած են ժառանգական մտերմային զգացումներով, — խիստ զանազանում է մեծ քաղաքների կրթուած՝ միմեանց շատ քիչ ճանաչող մարդկանց խօսակցութիւնից։ Ինչպէս առաջինները, նոյնպէս էլ վերջինները խօսում են աւելի այնպիսի նիւթերի մասին, որոնք նրանց լաւ են յայտնի և նրանց հասկացողութիւնների համար ընդհանուր են։ Միայն այն ամենը, ինչ որ այդ դէպքերում ընդհանուր է վերջինների մէջ, ընդհանուր է և շատերի համար, որովհետև անձնապէս նրանք ծանօթ են միմեանց հետ։ այդ պատճառով նրանք խօսում են ընդհանուր առարկաների մասին և դատողութիւններ անում անհատների լուսա

դիրքի մասին, խոռոշափելով անձնական շահների շօշափումիցը Առաջինների համար՝ կեանքի մանր երևոյթներից և բարեկամների վարմունքներից զատ չկան աւելի հանրական ու յարսնի մտածմունքներ, — այստեղից եղակացւում է, որ նրանք հակուած են խնամիութեան ու բամբասանքների ախոռով։

Կան և հարկադրուած՝ զանազան պաշտօնական կարգերով շրջապատուած խօսակցութիւններ, և ինքնաբերական՝ ազատ խօսակցութիւններ. Հետաքրքիր է, որ մեծ մասամբ նեղութիւն պատճառող փոխայցելութեան (ՎԱՅՐԵ) յիմար սովորութիւնը, որ աւելի ճշտութեամբ կատարում է ծառայող գասակարգը իրենց պաշտօնատէրերին և այլն, — սկիզբն է առել միջնադարեան խաւար ժամանակներից: «Ազգբնական փոխայցելութիւնները, որ կատարում էին ստորադրեալնեցը իրենց զիխաւորներին, գասականները իրենց հովանաւորողներին ևայլն, — նը-կատում է Թարգ, — զիխաւոր նազատակ ունեին ներկայացնել պարգևներ, սկզբում կամաւոր ու երեւմնակի, իսկ յետոյ սպիրական ու սիստեմատիկաբար. հասկանալի էր, որ այդպիսի այցելութիւնների ժամանակ խօսակցութեան նիւթը կարճ էր լինում և կայանում էր՝ մէկ կողմից հաճոքանալու սիրաֆունեթիւնից, միւս կողմից հովանաւորող չնորհակալաւթիւններից: Այստեղ ասւում էր մի քանի խօսք, իբրև յաւելուած պարգեին, որը մինչև այժմ էլ այնպէս են հասկանում խուլ անկիւնների գիւղացիները, երբ իրանք գործ են ունենում իրենց պայտանական անձանց հետ: Քիչքիչ այդ նախնական այցելութիւնների երկու ձեւերը միմեանցեց բաժանուելով՝ պարգել փոխանակուեց տուրքի, իսկ խօսակցութիւնը զարգանալով առանձին, այնուամենայնիւ, մինչև անգամ միմեանց հաւասարների մէջ՝ իր նախնական կարգերից պահեց ինչ-ինչ յատկութիւններ»: Հետևապէս, պարգեները սովորո-թիւնից դուրս ընկնելով՝ մնացին դիմաւորութիւնները (որինեցեած) և սիրախօսութիւնները (լուծա-հոստի). բայց հետզհետէ դրանք էլ փոփոխութեան ենթարկուելով, յանգեցին հասարակ խօսակցութեան ձեին:

Թարգը կարծում է, որ պարտաւորեցուցիչ խօսակցութեան սկզբնական միւս պատճառը եղել է սաստիկ թախանձը, որ զգում էին առաջուայ մարդիկ՝ առանձին անկիրթները, երբ պարապ էին մնում, նրանց հետ զբաղւում էին փոքրները, — այստեղից եղակացւում է խօսակցութեան պարտաւորացուցիչ «Ժիսական» (ՊՐԵԳՈՎԱՐԱԿԱՆ) նիւթի առաջ գալը: Խնչ վերաբերում

։ Խօսակցութեան ինքնարերական ձևին, դրա աղբիւրը համար-
ռում է մարդկանց շփողութիւնը (օնացիւլիութեան), որ միշտ
նկատում է խելքով ու դիրքով միմեանց հաւասար մարդկանց
յարաբերութեան մէջ։

Տարակոյս կարող չէ լինել, որ խօսակցութեան պատմա-
կան արմատները պէտք է որոնել մարդկային հասարակութեան
յայտնութելու ամենասկիզբի մէջ, երբ լեզուն, Թարդի ասելով,
«մարդու առաջին էստետիկ պճնութիւնն էր (րօսկօշ), նրա
հնարագէտ հանճարի առաջին նշանաւոր յաւելուածը, որը սի-
դում և պաշտում էին ինքն ըստ ինքեան, ինչպէս արուեստի
տուարկայ, կամ աւելի ճիշտ—ինչպէս խաղալիք քան թէ զէնք»։
Կարելի է կարծել, որ խօսակցութիւնը առաջ է եկել երգեցո-
ղութիւնից, որ առաջ՝ նախնական մարդիկ պարապ ժամանակ՝
միմեանց հետ խօսելու փոխանակ, երգում էին միասին, կամ
մէկը երգում միւսի համար. Այդպիսի երաժշտական խօսակցու-
թիւնների մնացորդները կարելի է տեսնել հովուական բանաս-
տեղծական երգերի փոխարիխնութեան մէջ. ինչպէս և էսկիմոսնե-
րի սովորութեան մէջ, որոնք որ ևէ մէկին դիմաւորելիս՝ եր-
գում են։

Իհարկէ, խօսակցութեան արուեստը,—առուում է ընձ-
նականութիւն և ամբոխսի մէջ,—կարող էր երեան գալ միայն
ինելքերի երկարամէ յղկուելուց, սկզբնական վարժութիւնների
ամբողջ դարերից յետոյ, դարե՞ր՝ որոնք վերաբերում են ամե-
նահեռու անցեալին. Ժամանակակից մարդը երեակայել անդամ
կարող չէ, թէ որքան նրա նախնիք աշխատել են, որպէսզի
առեղծեն այն հասարակ բանը, որ խօսակցութիւնն է։

Կարելի է երեակայել, որ նախապատմական մարդիկ ի-
բենց հովուական ու՝ օրսորդական կեանքում ունենալով ազատ
շատ ժամանակ, խօսում էին կամ գոնէ աշխատում էին խօսել
շատ երկար. Վայրենիները և վայրենուհիները մինչև այժմ էլ
նշանաւոր են իրենց յայտնի շատախօսութիւնով, առանձնապէս
վերջինները։

Ինչպէս նկատուած է վերել, այնուամենայնիւ խօսակ-
ցութիւնը վերին աստիճանի դանդաղ անում և ընդունում էր այն
ձևը, ինչ որ տեսնում ենք այժմ։ «Խօսակցութեան առաջացու-
մը գանդաղեցնող պատճառներից մէկը, նրա մինչև հաստատ
դշխանութիւն ստեղծելը,— ասում է Թարդ,— էր այն՝ որ ան-
կիրթ մարդիկ միմեանց հաւասարներու մէջ սովորութիւն ունեն

խօսել միաժամանակ ամենքը և միշտ միմեանց ընդհատելով։ Եյդ իսկ պակասութիւնը ունի և երեխանների խօսակցութիւնը խօսակցին թոյլ տալ խօսելու—քաղաքավարութեան նշան է, որ որոշում են նախ դէպի իրենց բարձրի յարգանքով, իսկ յետոյ արդէն տարածում են դէպի ամենքը, երբ այդ սովորութիւնն է պահանջում։ Ուստի այդ տեսակ սովորութիւնը ընդհանրապէս կարող է տարածուել որևէ երկրում միայն սկզբնական երկարատև կարգապահութեան միջոցով (շանձնականութիւն և ամրոխ)։

Համաձայն գիտութեան մէջ յայտնի վրեկնութեան կրճատման օրէնքին որով այն երևոյթը, որ երեխայի հոգին անցկացնում է իր աստիճանաբար ձևակերպութեան միջոցին, պիտի ներկայացնեն նախն ական հասարակութիւնների յայտնի աստիճան կրճատուած կրկնութեան աճելութիւնը, — երեխանների խօսակցութեան ուսումնասիրութիւնը կարող է ծառայել իրենքել, գուշակելու համար թէ ինչպէս էր մարդու կեանքի առաջին դարում խօսակցութիւնը։ Յայտնի է, որ երեխանները իրենց խօսակցութիւնը սկսում են մեծերից հարցումներ անելուց։ մի քիչ ուշ նրանք սկսում են դառնալ պատմողներ և պատմութիւն լսողներ, կամ փոփոխակի մէկ պատմում, մէկ լսում են։ Աւելի ուշ նրանք նկատողութիւններ են անում, արտայայտում են ամեն-ինչ, որ նրանք կարողացել են դիտել և այդ կազմում է ծնունդ ճառախօսութեան կամ խօսակցութեան։ Խօսքերը փոքր առ փոքր դառնում են փոխադարձական, փոխադրում են կոռուփ և ապա խօսակցութեան։ Բայց երեխայի այս բոլոր մտաւոր վարժութիւններից առաջ կատարում է նրա կամքի վարժութեան պրոցեսը՝ նա սովորում է հնագանիուել և հրամայել շատ առաջ, քան իմանալ սովորել ու սովորեցնել։ Ենթեխան՝ արտայայտական թեքումից (ՀԱԿԼՈՒՀՈՒՏԵՎՈՐՈՒՅՈՒՆ) առաջ հրամայականն է ճանաչում։ Նախ քան վիճելը կամ դատելը, նա կուռում է։ Նա ուրիշից ցանկութեան հակադիմութիւնը (ՊՐՈԴՐՈՎՈՂՈՅՈՒՏԵՎՈՐՈՒՅՈՒՆ) զգում է աւելի շուտ, քան իր դատողութեան հակադիմութեան հետ ծանօթանալը (Թարդ)։

Խօսակցութեան պատմական վերանորոգումը նկատում է պատճառների շատ տարբեր մասսաներում, սկսած մեծ ու նշանաւորներից և վերջացած ամենաշնչիններով։ Պատճառները լինում են լինգվիստակական (լեզուաբանական) որոնք են՝ լեզուի հարստութիւնը, երաժշտականութիւնը, շատախօսութեան մէջ

երեացող առանձին գոյները. պատճառներ կրօնական—այն է՝ աստուածաբանական զրոյցների խրախուսում, կամ լոռութեան հրահանգ (պիւթագորիզմ, քրիստոնէական կուսակրօնութիւն), քաղաքական, տնտեսական (աղատ ժամերի բաւականութիւն) և այլն: Զնշին պատճառների թուին պատկանում է, օրինակ, մարմնի կացութիւնը խօսակցութեան ժամանակ, այն է պառկած դրութեամբ խօսակցութիւնը լինում է աւելի ժանը, դանդաղ և սահուն, իսկ ման եկած ժամանակ կատարուածը տարրերուում է իր շտապողութեամբ և վառվուուն դիրքով: Խօսակցութեան վրայ ազդում է նոյնպէս և օրուայ ժամանակը:

Ինչ վերաբերում է խօսակցութեան նիւթերին, սրանը բազմանում են կրթութեան և գիտութեան արած յառաջադիմութեան հետ հաւասար, նրանց տարածման համաձայն և առհասարակ ամեն տեսակ հաղորդութիւնների բազմանալուց: Վերջապէս, բարքերի դէպի դեմօկրատիականութիւնը փոփոխուումից աւելանում է ոչ թէ միայն կարելի խորհրդակիցների թիւը, այլ և փոխում է և վերջինների որակութիւնը. Հասարակութեան զանազան խաւերի մարդիկ աւելի ազատ են մտնում խօսակցութեան մէջ և գիւղերից քաղաք տեղափոխուելու դէպօւմ. քաղաքային բարքերի տարածման միջոցով անդամ գիւղական բնակչութեան մէջ, ընդհանուր կրթութեան միջին մակերևոյթի բարձրացման դէպօւմ, խօսակցութեան յատկութիւնները բոլորովին ուրիշ են դառնում. և կին նիւթերը փոխում են նորերի: Մեր դարի գլխաւոր գիւտերը, առանձնապէս մամուլը, խօսակցութեան աճման և բովանդակութեան վրայ ունեցել են իրենց ամենալուական նշանակութիւնը, օժտել են նրան լայն աշխարհայայեցողութիւնով, նիւթերի բազմատեսակ տարրերութիւնով և խորացըել են նրա բովանդակութիւնը:

Վերջին ժամանակներս խօսակցութիւնը իր աճման մի նոր ճննաժամ է անցկացնում: Առաջ խօսակցութիւնը յաճախ արտայայտում էր կուինների դիրքով: Վեճերու հաճութիւնը համապատասխան է նոյնպէս երեխայական բնազդումին, օրինակ կատուի ձագերի և ամեն տեսակ կենդանիի ձագերի բնազդումին, որոնք, մեր երեխաների նման, զուարձանում են ձևական կամ շատ մեղմիկ կռուով: Հասակաւոր մարդկանց երկարախօսութեան (դիալոգ) մէջ վէճերի քանակութիւնը քանի զնում փաքրանում է: Որքան ամեն բանի մասին իմացողութիւնը քանի գնում աւելի պարզում, ճշտանում և բազմակողմանի է

դաւնում, որքան մարդիկ իմանում են տարածութիւնների մասին թռւական ճշտութիւն, քաղաքների բնակիչների և կայութիւնների մասին նոյնպէս, ևայլն,—բոլոր անողորմ վէճերը որոնք առաջանում են հաւաքական ինքնասիրութիւնից, —ինչպէս օրինակ, վէճը այն մասին, թէ այս—ինչ կորպորացիանեկամ տոհմը նշանաւոր է աւելի քան միւսը և այլն, —վելացան առարկայի (վէճի) չգոյութեան պատճառով (Թարդ):

Անյայտանում են կրօնական՝ իր ժամանակին տեղի ունեցած ամենասուկալի վէճերը, և նրանց փոխարինող փիլիսոփայական, գրականական, էստետիկական, բարոյական վէճերը, հների հետ համեմատած, շատ մեղմացած են: Այդ պատճառով կարելի է հաստատել, որ ապագան պատկանում է հոնդարտ ու խաղաղ, խօսակիցների փոխաւորձ գաղափարներին յարդանք արտայայտող, քաղաքավարի և զիջող խօսակցութեան:

Անտարակոյս սոցիալական կեանքի մէջ խօսակցութեան ունեցած նշանակութիւնը ահագին է և այդ բաւականին ակնյայտ է: «Լինգվիստիկական (լեզուաբանական) տեսակէտից նա պահպանում և հարստացնում է լեզուները. նա առաջացնում է գրականութեան դուրս գալը առհասարակ և դրամայի մասնաւորապէս: Կրօնական տեսակէտից խօսակցութիւնը միակ միջոցն է, որ կարող է քարոզչութեան համար արդիւնաւոր պատուներ տալ: Քաղաքականութեան համար, մինչև մամուլի մէջ երեալը, նա կառավարութեան միակ սանձն է կազմում, իսկ ազատախօսութեան համար եզակի միջոցը. նա կարծիքներ է ծնեցնում և իմացականութիւն առաջացնում, փառք և անուն ձեռք բերում հետևապէս և իշխանութիւն: Նա աշխատում է խօսակիցների մէջ հաւասարութիւն սահմանել, նմանացուցանելով նրանց միմեանց և արտայայտութեան միջոցով ոչնչացնում է երարխային տարրերութիւնը: Տնտեսական տեսակէտից միակերպութեան է բերում բոլոր խորհրդածութիւնները հարստութեան զանազան կերպերի մասին, որոշ հասկացողութիւն է ստեղծում գնահատութեան համար և արժողութիւնների որոշ աստիճան կամ սիստեմ առաջացնում: Այդ պատճառով աւելորդ դատարկախօսութիւնը, այդ հասարակ ժամավականաւութիւնը անտեսական ուստիլիտարիստների¹⁾ կարծէքով անտեսական

¹⁾) «Ուտիլիտարիզմ»—Բենտալի ուսուցումը, որով հաշ-

գործիչների համար կազմում է իրապէս մի անհրաժեշտութիւն, որովհետև առանց այդ չէր կարող գոյութիւն ունենալ հասարակական կարծիքը, իսկ առանց վերջնիս չէր կարող լինել ոչ մի առարկայի համար արժէք, կարող չէր լինել արժողութեան մասին գաղափար, որը տալիս է որոշ հասկացողութիւն քաղաքական տնտեսութեան մասին և այլն» («Անձնականութիւն և ամբոխ»):

Խօսակցութիւնը սոցիալական կեանքի մէջ ահագին օգուտ է բերում և բարոյական տեսակէտից —նա յաջող կռիւ է մըղում էգոիզմի դէմ, և դէպի այն անհատները, որոնք ընդունակ են ամենուրեք ի նկատի ունենալ միմիայն անձնական նպատակ։ Ներ, Էստետիկական տեսակէտից նա քաղաքավարութիւն է առաջացնում, աշխատում է համաձայնեցնել զանազան խորհրդածութիւնները էստետիկական ճաշակի մասին, որին և ժամանակի ընթացքում կարողանում է հասնել, այդպիսով մշակելով այն բանաստեղծական արուեստը, էստետիկական օրէնսդրութեան (Կոտեկս), որին անվիճելի կերպով հնազանդւում են բոլոր գարագլխներում և ամեն երկրում։ Այդ կերպով խօսակցութիւնը գործում է յօգուտ յառաջադիմութեան, որի համար քաղաքավարութիւնը և արուեստը կազմում են գլխաւոր սկզբունք և պայման (Թարդ):

Նամակը կամ լրագիրը, իսկապէս, կազմում են ոչ այլ ինչ եթէ ոչ խօսակցութիւն։ Խօսակցութիւնը առաջցընց գրադրութիւն, որը այժմ աճում է աւելի և աւելի կրճատած՝ կերպով՝ հեռագիրների միջոցով։ Հեռագիրները, այսինքն, իսկապէս թղթակիցների մասնաւոր հաղորդութիւնները մի որևէ անձին — լրագրի խմբագրին, որի թերթի միջոցով յայտնւում է նրանց բովանդակութիւնը, նորութիւնները ահագին թիւ մարդկանց, որոնք բնակւում են միմեանցից ամենահռաւոր տարածութիւնների վրայ — իսկապէս խօսակցութիւն է։ Եւ տարբեր, զանազանակերպ մարդկային ամբոխը մէկ ակնթարթում կապւում է սերտ շփումով և չնայած տարածութեան, հաղորդուած լուրի պատճառով գրդում է մարդկանց միաժամանակ զգալ և դիմել մտաւորապէս միևնոյն կտտին, և յդպիսով կազմելով իրանցից, — ասում է Քրանսիացի հոգեբանը, — մի ահագին արս-

ւում է արդարացի այն օրէնքը, որը ծառայում է հասարակական օգուտին

տրակտական¹⁾ և բռնակալական ամքոխ, որ հասարակական կարծիք է կոչւում»:

Հասարակական կարծիքը, —եթէ փնտրելու լինենք նրա սկզբնական աղքիւրը, ստեղծուել է նոյնպէս խօսակցութիւններից; Աւ անա ինչու համար է, որ խօսակցութիւնը՝ իր ունեցած նշանակութիւնով հասարակական կեանքի զանազան ֆակտորների շարքում չունի իր հաւասարը, իր մրցակիցը՝ նա հասարակականութեան առաջին հիմքն է, յառաջադիմութեան գլխաւոր գործոնն է կազմում և առածը նրան «արծաթ» կոչելով հիմնապէս սխալում է, —խօսակցութիւնը աւելի ճիշտ կարելի էր անուանել ժամանակակից հասարակականութեան թագիթանկադին՝ դեռ ևս արժանաւոր կերպով չզնահատուած մի գոհար:

Դ. ՔԵՄԵԶԵՑԵԱՆ

Մոսկովա, 18 հոկտեմբերի
1903 թ.

¹⁾ «Արստրակտա — վիլիսովիայական խօսք է, որ նշանակում է չեռացած կարծիք»: